Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-665-19.09.2023-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ

ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 58-րդ կետով.

«58) 2024 թվականի հունվարի 1-ից մինչև 2026 թվականի հունվարի 1-ը ԵՏՄ ԱՏԳ ԱԱ 8702 40 000, 8703 80 000 և 8711 60 ծածկագրերին դասվող էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոցների ներմուծումը և (կամ) օտարումը:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից և գործում է մինչև 2026 թվականի հունվարի 1-ը:

Կ-665-19.09.2023-ՏՀ-011/1

Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ

ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 58-րդ կետով.

«58) 2024 թվականի հունվարի 1-ից մինչև 202~~5~~6 թվականի հունվարի 1-ը ԵՏՄ ԱՏԳ ԱԱ 8702 40 000, 8703 80 000 և 8711 60 ծածկագրերին դասվող էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոցների ներմուծումը և (կամ) օտարումը:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից և գործում է մինչև 202~~5~~6 թվականի հունվարի 1-ը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-665-19.09.2023-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ ԱԺ պատգամավոր Արսեն Թորոսյան, ՀՀ կառավարություն	Հոդված 1 Հոդված 2	Առաջարկվում է՝ Հոդված 1-ի 2-րդ պարբերության մեջ «2025» բառը փոխարինել «2026» բառով, Հոդված 2-ում «2025» բառը փոխարինել «2026» բառով	Ընդունվել է: Հարկ է նշել, որ Եվրասիական միջկառավարական խորհրդի 2023 թվականի հոկտեմբերի 26-ին կայացած նիստի ընթացքում համաձայնություն է ձեռք բերվել երկու տարի ժամկետով երկարաձգել էլեկտրական շարժիչով մեքենաների ներմուծման արտոնությունը, որի շրջանակներում 2024 - 2025թթ. Հայաստանի Հանրապետության համար հատկացվել է սակագնային քվոտա՝ յուրաքանչյուր տարվա համար 8000 հատ էլեկտրաշարժիչով շարժիչային տրանսպորտային միջոց:	Ընդունվել է:

				Հարցը ներառվել է ս.թ. նոյեմբերի 24-ին կայանալիք ԵՏՀ Խորհրդի նիստի օրակարգում: Վերոնշյալ արտոնության շրջանակներում դրական արդյունքներն ամրապնդելու և էլեկտրական տրանսպորտային միջոցների օգտագործման հետագա զարգացումն ապահովելու նպատակով՝ առաջարկվում է ավելացված արժեքի հարկի արտոնությունը երկարաձգել ևս երկու տարով /2024 թվականի հունվարի 1-ից և գործում է մինչև 2026 թվականի հունվարի 1-ը/:	